ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 762 -Ա

25 նոյեմբերի 2024 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 26-ի N 1498-Ա որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները՝

որոշում եմ.

1. Հաստատել ««Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և « Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միաձուլման կարգը և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

25.11.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզպետի

2024թ. նոյեմբերի 25 -ի

N 762-Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Միաձուլման սույն կարգը և պայմանները սահմանվում է՝ ի կատարումն «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. սեպտեմբերի 26-ի N 1498-Ա որոշման:
2. **Միաձուլման միջոցով վերակազմակերպման կարգը և պայմանները.**

   1) Միաձուլման ճանապարհով վերակազմակերպված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների

գործունեության դադարման պետական գրանցումից հետո տասնօրյա ժամկետում միաձուլվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կազմված և կազմակերպությունների հիմնադիր հանդիսացող պետական կառավարման լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ հաստատված փոխանցման ակտերի համաձայն՝ մինչև գործունեության դադարման պետական գրանցման ավարտը «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները հանձնում են, իսկ միաձուլման արդյունքում ստեղծված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ընդունում է միաձուլվող կազմակերպությունների առկա հիմնական (օգտագործման իրավունքով պատկանող) և շրջանառու միջոցները, այլ գույքը, դրամական միջոցները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները:

2) Հանձնման-ընդունման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ ստեղծված հանձաժողովի կողմից: Հանձնում-ընդունումը կատարվում է համապատասխան ակտերի միջոցով, որոնք ստորագրվում է կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից և ենթակա է հաստատման Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպությունները վերակազմակերպված են համարվում նոր ստեղծված իրավաբանական անձի պետական գրանցման պահից, իսկ վերակազմակերպումը կատարված է համարվում գրանցամատյաններում վերակազմակերպությունների վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու պահից:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2024-11-25 15:12:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս.ՄԱՆՈՒԿՅԱՆ